




ՄԱՅԳ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԵՐԿՈՐՇԱՅ ԱՆՎԱՆ ՀԱՅԱԹԵՐԹ

لبنان جريدة ارمينية سياسية ادبية اقتصادية وحرية

ՊՏԵՐ ԵՒ ՏՅՈՐԿ
Ժ. ՍՃԷՄԵԱՆ
Խմբագրական
ԲՐՈՅ. Ս. ԹՈՒՄԱՃԱՆ
Վարձ - խմբագիր
Թ. ՊԱԼԵԱՆ

LIPANAN
JOURNAL ARNÉNIEN
POLITIQUE LITTÉRAIRE
Place des canons
BEYROUTH LIBAN
DIRECTEUR- PROPRIETAIRE
J. ADJEMIAN

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
16
ՅՈՒԼԻՍ
1930

ԲՈԺԱՆՈՐԴՈՂՈՒԹՅՈՒՆ
ՍՈՒՐԻԱ ար. 350 Ս Դ
ՎԵՍՏԱՆԵՍ 200
ԱՐՏԱՍՏԱՆԵՍ ար. 6 ծախ
ՎԵՍՏԱՆԵՍ 4
Հասցե. Քլաու Տե Գաբոն
ՊԵՅՐՈՒԹ - Լիբանոն

2. ՏԱՐԻ ԹԻՒ 476

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԵՐԵՎԱՆԻ ՀԻՆԴՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐ

ՀԵՐԿԷ 3 Ս. ԴԱՀԵԿԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱԳՆԱԴ

Եկեղեցական Թաղուր Աթոռներ

Ներկայիս գաղութային երկրուն կենտրոնում տաճարային կարևոր խնդիրներուն վրայ բարձրացած են երկու առիթի կարևոր խնդիրներ, երկու նուիրական աթոռներուն շրջանին համադրական խնդիրներուն շրջանին...

Ազգային և եկեղեցական տնտեսական համակ նուիրում եղող և յաջորդաբար շրջող երկու մեծ հայրապետներու կորուստը որքան կակծալի նոյնքան անուշադրական ցաւալիէ անոնց թողուցած յայտը:

Նախապատերազմեան շրջանին նմանօրինակ անգարմանելի կորուստներէ վերջ ազգ. սահմանադրութեան օրինական տրամադրութիւններով կը լուծուէր նոր աթոռակալներու ընտրութեան խնդիրը:

Դժբաղդաբար սակայն համաշխարհային պատերազմի ստեղծած անբնական պայմաններու բերումով սահմանադրական իրաւակարգերու պատշաճեցումն եթէ ոչ անհնարին գոնէ դժուարին չարձան ըլլալով, հանգուցեալ երկու եկեղեցական գահակալներու յաջորդներու ընտրութեան գործը կը դառնայ մտահոգիչ, տրուած ըլլալով մանաւանդ որ հեռացող կարող ուժերու պակասը լրացնող արժանաւոր պէմքեր գրեթէ գոյութիւն չունին:

Մայր Թաղուր, եկեղեցւոյ և պետութեան անջատումէն վերջ բաւական տուեալ եղաւ իսկ Արմաշու Դպրեմանքին մեծ սիւնը այդ եկեղեցական նուիրական կեդրոնը թէև յաջողեցաւ փոխադրել Երուսաղէմ սակայն իր երազած հունձքը չվաշխած, հեռացաւ անպառնալի կերպով:

Հետեւաբար երկու Ս. Աթոռներու համար ալ արժեքներուն ունի արժանաւոր գոհակալներու հարցը:

Հոգեւոր Ս. Գեորգ Ե. Կաթողիկոս հայաստանի խորհրդայնացման պատճառաւ ստեղծուած նոր դրութենէն մղուած, կանխագուշակեցաւ հայրապետի ընտրական գործով և Զարական Ռէժիմի Ս. Սինդիկատ յաջորդող Գեր. հոգևոր խորհուրդի աշակցութեամբ, ջանաց պատրաստել եկեղեցական նոր կոնստիտուցիան:

Նոյնը չեղաւ սակայն Ս. Յակոբեանց առաքելական աթոռի մէջ, ուր, յամենայն դէպս միաբանական ժողովի միջամտութեամբ, առիւթը նկատուեցաւ նմանօրինակ ձեռնարկ մը, ընտրական ամէն գծաւորութիւն լուծելի համարուելով միաքանակեալ ժողովի որոշումով:

Բարեբաղդաբար սակայն ոչինչ կայ մտահոգիչ երկու աթոռներու գահակալներու ընտրութեան մէջ ալ զորս կարելի է լուծուած համարել տրուած ըլլալով որ Ս. Յակոբեանց միաբանական ժողովը, կանխատեսելով ցարդ իջուելու եղող ընտրական իրաւակարգերու անպատեհութիւնները եւ անոնց նկատի առնելու նոյն իրաւակարգերով ընտրութիւն կատարելու համար զանազան կեդրոններէ ցոյց տրուած առաջարկները, ընտրական վերջին ծայր կուտայ իշխման հոգևոր պետին իրեն համադրական ներկայացուցիչ մինչև Մայր Երկրի մէջ, իր ԽՈՐՀՐԳԱՅԻՆ ՇՊԱՐՈՎ, ոմանց խորթ երեցող հայկական կանաչաբուսութիւնը, կ'երաշխսուէր ամէն գիւրութիւն նոր հայրապետի ընտրութեան համար:

Երկու բարձրաստիճան և իրենց աստիճանը արժեքնող տեղապահներ, Ս. Խորէն Արք. Մուրադէկեան Էջմիածին և Ս. Մեսրոպ Եպիս. Նշանեան Երուսաղէմ կը վարեն եկեղեցական գործերը երկու Առաքելական աթոռներու մէջ: Իրենց կարելին ի գործ դնելով յառաջիկայ ընտրութեանց շնորհիւ երկու այլիպեցեալ աթոռները արժանաւոր գոհակալներով օժտելու համար:

Համաձայն Էջմիածնի Գեր. հոգևոր խորհուրդի պաշտօնական յայտարարութեան, նոր հայրապետի ընտրութիւնը պիտի կատարուի հոկտեմբերի վերջերը:

Բարեբաղդութիւն մ'է անշուշտ որ կիլիկիոյ Գերուսաղաբը հայրապետը, յոյժ գնահատելի կանխատեսութեամբ մը, իր կենդանութեան իսկ լուծած ընտրական ամէն գծաւորութիւն իր արժանաւոր յաջորդը Ս. Բարդէն Եպիս. Կիլիկիեանը ուժանորդելով ոչ միայն իր 150,000 բաղմատարը հօտի համակրանքով ու յարգանքով, այլ Անթիոքի ներկայացուցիչ Կաթողիկոսութեան լիբանոնի եւ Սիրիայի կաթողիկոսութեան թեմերով:

Ինչպէս Սուրբիոյ և Լիբանոնի նոյնպէս Մայր երկրի և տարբեր կեդրոններու մէջ հաստատուած հայեր, եկեղեցական իշխանութեանց հանդէպ իրենց անվերապահ յարգանքով կուգան անգամ մ'ալ հաստատել թէ հակառակ տիրող նախաձեռնութեան ազգային եկեղեցական մշակոյթը կը պահէ իր նյութ մեծութիւնը:

Յ. ՊԱԼԵԱՆ

ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ

Նախակրթարաններ

Թէհրանի մէջ լոյս տեսնող «Բոլոր» զաւեշտութիւնը, իր մէկ մօտաւոր թիւին մէջ կը պարունակէ յոյժ յատկանշական ծաղրանկար մը իր երկու «հազարաբաժնեան» ուղղութեան վերտառութեամբ յօդուածներով: Տիկին մը երկու զաւակներով որոնք ազգ. նախակրթարանի ընթացաւարտի վկայագիր ունին խնդիր, կը ներկայանայ քաղաքացեալ իր շրջանաւարտ գաւակներուն յարմար պաշտօններ խնդրելու համար, քաղաքացեալ համակիր ակնարկ մը նետելով կը պատասխանէ. «Առանց աւարտման վկայագրի ոչ ոքի գործի չենք ընդունում»: Պարսն կառավարիչ, իմ տղէքս հայոց վարժարանից վկայական ունին»: Կառավարիչը կը մնայ անտարբեր ու անողորմ:

Դպրոցական վեցամսեային և վերջամուտին հայ ծնողներ, պատկան ազգային մարմիններուն հետ բարձրագոյն կը յայտարարեն թէ վարժարանական տարին բոլորուած է յոյժ արդիւնաւոր կերպով թէ յառաջիկայ շրջանը պիտի ըլլայ աւելի փայլուն, աւելի արդիւնաւոր, կարելի չէ չլուստովանիլ թէ ծնողները եւ թէ ազգային պատկան մարմիններ սիրայօթար եւ անշահախնդիրօրէն փարած են կրթական գործին կը ջանան, անխտիր, հետզհետէ աւելի բարձրացնել վարժարաններու կրթական - ուսումնական մակարդակները, առ այդ ուսանողէն աւելի ծանրանալով ուսուցիչին վրայ, սակայն դժբաղդաբար, մեր ազգային նախակրթարանները հեռու են մեր հարեւան նախակրթարաններու նախանձելի մակարդակէն: Նոր սերունդի Դպրոցականութեան հարցը մեր հարեւաններէն աւելի կը շահագրգռէ զմեզ մեր վրայ ծանրացող անտեսական եւ ընկերային պայմաններու բերումով, ուրիշ ազգերու համար նախնական դաստիարակութիւնը, նախնական ուսումը հիմն է երկրորդական կամ բարձրագոյն դաստիարակութեան եւ կուտան գոյամարտի գծաւորութեանց դէմ մղուած համար, մինչ զեռմինք բացի այս իրական տեսակետներէ անկէ կակնկալենք մեր ազգային գոյութեան պահպանութիւնը:

Քաղաքակիրթ աշխարհի մէջ ձգտաբար ջանալուով նախակրթարանական ուսումը մինչ հակառակ մեր խարխլած անտեսական պայմաններուն, կապահովենք մեր սեփական միջոցներով, մուտքի դրամ, ներկայացումներու, հանգանակութեան զօգարդի կամ այլ ձեռով կատարուած աշխատանքներու հասոյթներ, ամէն տարի կը յաջողիք ապահովել մեր կրթական ելեւմուտը: Քաջար. Կաթող. Բ. Էջ. Բ. Գր. Եպիս. Ե.

Կամրքներ

ԿԱՆԱՆՅ ՎԵՐՋԻՆ

ՆՈՐԱԶԵԻՈՒԹՅՈՒՆԸ

Վերջոպէս սկսաւ իրականանալ. Ս. Պապէն սկսեալ մինչեւ ամենափոքրիկ պահպանողականներու փափաքը մասին կանացի կարճ հետեւաբար գալիս չկեցուցիչ հազուստներու փոփոխութեան:

Նախկինում օլորդներ եւ համատարալ տիկիններ սկսած են պաճուել իրական հազուստներով, որոնց լայնարաց քղաքցները կը յանգնին ծածկել մարմնաթոյր զուլ պաներով զարդարուն հմայիչ սրահները, իսկ երկար թեղանիքները զայնակեցուցիչ եւ զգշիւ մերկութիւնը վարդաքոյր թեւերուն յաճախ աւելի հրապուրիչ դարձած ոսկեղէն ապարանջաններով:

Կանանց աշխարհի մէջ տեղի ունեցող այս բազմալի փոփոխութիւնը, երանի թէ հազուստներու հետ համահաւասար կերպով երկնցներ նաեւ կիներու խելքն ալ:

Թող շարունակեն սակայն մեր նազեղաշուքները, նպատակաւ սրատաւորել չէ անոնց իմացական կարողութիւնները, որոնք շատ անգամ աւելի զօրաւոր են քան այրերունը և իրենց իրաւունք սոււած են մինչեւ նախարարական աթոռներ բաղմնելու այլ այս մտղթանքը կը կատարեմ պերճանքի շանդէպ իրենց ցոյց տուած անորակելի եւ կործանարար նուիրումին չափաւորութեան համար որ իրենց կարճամտութեան մէկ զգրական փառսն է:

Առանց նկատի առնելու նոր ձեւափոխութեան առթած մտատանջութիւնը կարճ հազուստներու սիրահար կարգ մը այրերու, կրնանք ըսել թէ տարազի այս անակնկալ փոփոխութիւնը մեծամեծ շահեր կապահովէ կերպասավաճաններու եւ գերձակներու իսկ ընդհակառակն մեծամեծ կորուստներ կառթէ խեղճ աճուսիներու, որոնք աւելող տնտեսական տալանաւէն ընկճուած ըլլալով հանգրձ պիտի հարկադրուին գոհացում տալ գեղեցիկ սեռի անյազ փափաքներուն, ենթարկուելով անհարկի ծախքերու:

Սակայն խնդիր է գիտնալ թէ կարճ զգեստները լեզոյ և երկաւները իրեն նորաձեւութիւն ընդգրկող մեր փափուկ սեռը, երբ այս մօտայնէ ալ վազ անցնի, ինչ տեսակ հազուստներով պիտի ջանայ ծածկել իր հրապուրիչ մարմինը, արեւելեան արտավարտիքը պիտի նախընտրէ թէ արական տարաւոր իրիտ մօտաւոր սպազան պիտի տարապատասխանը:

ՕՏԵԱՆ ՈՐԴԻ

ՃԱՄԲՈՒ ՆՈՐԵՐ

Յունիս 5 շաբաթ օր կէսօրէ յետոյ Պէյրութէն մեկնելով իրիկուան ժամը 9.30 ին կը հասնիմ Դամասկոս եւ ինձ տրուած յանձնարարական նամակի մը համաձայն կը դիմեմ տեղւոյն երեւելիներէն Տիարք Եսաղուպեան Եղբարց բնակարանը: Հոն կը գիշերենք: Նոյն օրը նկարագրութիւնը բնականաբար մի քիչ ելկար պիտի լլայ, որովհետեւ միայն Դամասկոսի յատուկ չէ, այլ ցեղեցի եւ հետզհետէ ձէպէլ Տիւրիւզ, Սուէյտիա, անկէ վերադարձին Ապա: Տիւր քաղաքները եւ պատեհութիւնն ունեցող ծանօթանալու այդ անդերու հայոց ընդհանրական վրայ: Ասկէ առաջ կեղծութիւններն են որ նկատու առնուած են, մինչդեռ Սահարայի մէջ հոս ու հոն ցրուած անգիրն հայութիւն մը կայ որը սեփական կեանքը ապահոված է, դժբաղդաբար միւր սովորական եղած անհոգութեան երեսէն երէք չենք հետաքրքրուած: Եսաղուցը այս է, Սուէյտիա, Ազրա եւ Տրա կը պարունակեն կանոնաւոր եւ կոկիկ հայութիւն մը իւրաքանչիւրը, ինք իր մէջ եւ գործով շատերը անկախ եւ ինքնապահ, մենք տեսնեք որ այս երեք քաղաքներու մէջ ալ դպրոց չկայ: հարցունքը պատճառը եւ կըսեն որ մենք ամէն ալ զարծ ունինք, եւ չենք կրնար ամով զբաղիլ եւ կազմակերպել մարմին մը պէտք է լլայ, ուզէ մեղմէ զրամը փոխէ գաստու, գասագիրք, եւ այլ պէտքեր եւ բանայ դպրոցը: Եկեղեցի ալ չկայ միայն մենք յառ այժմ այդ զանց ընելով գաղութական խնդիրը պատկան մարմիններու ուղարկութեան յանձնելէ յետոյ, նոյնքոյն շարունակութեանն առաջ կանգ պիտի առնենք ուղարկու եւ վերին աստիճանի կարեւոր մէկ կէտի վրայ որը կը պատկանի Դամասկոսի եւ ստոյգ լլայով խօսած է մեզ տեղւոյն համակրելի կաթ. փոխ. ինչպէս Եսաղուցը Ազրապեան:

ՁէՁՈՒՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՒՆ

Խոստցումը միայն պիտի տանք որովհետեւ շատ երկար է պատմութիւնը, Դամասկոսի մէջ մենք տեսնուեցանք տեղւոյն մասաւորական եւ ազգեցիկներէն Տիարք. Թաքուր Պոյաճեանի, Վարդան Կրիւնի, Տօքթ. Թօփճեանի եւ իմ իջեւանած տան պետին Նազարէթ էֆ. Եսաղուպեանի հետ եւ հասկցանք որ երկարատե շանքով վերջնական յաջողած եւ քաղաքի չէզոք տարրը [այսինքն անկուսակցական] միակ մէկ նպատակի շուրջ հաւաքելով կազմած են «Ձէզոքներու Միութիւն» մը: Դամասկոսէ մեկնած րոպէյիս որքան կրցայ հասնիմ Պոյաճեան էֆէնտի, յէ, այս միութեան պաշտօնական հանգամանք տալու համար որոշուած է քաղաքը կատարել ամսոյ 27 ին Տօքթ. Թօփճեանի նախագահութեամբ եւ հաւաստուած ին համաձայն երկու հարիւրի չափ ընտրուած անդամակցութեան մը ներկայութեամբ, եւ հոս գործիք պատրաստել Ծրագիր — կանոնադրը, այսինքն թէ Ձէզոք Ազգայնոց հետեւելիք ուղին ինչ պիտի լլայ եւ լլայուէ այսուհետեւ ազգ. եւ տրեստեսական գետնի վրայ քաղաքականի հետ գործ չունենալով:

Ձենք գիտեր ինչ գրելու ենք: հիւայ հասկցանք տրեք եւ ասիկայ իրենց գործ մը պիտի լլայ: մեր կարգ մը փառ գլուխ կուսակցականներուն, որոնք իրենց անվերջ կազմու կուսակցութիւնն անհամաձայնութիւններով եւ եղբայրասպանութիւններով ի վերջոյ գլուխցունքն ազգի լուրջ տարրը իրենց է եւ աստիճանական խմորումով ինքնինքնին կազմակերպելու վիճակէ: հոսուցին: Մենք չկրնանք ասոր գէտ ալ օլ:

տի լլայ ստոր եւ քու առարկութիւններ անոնց կողմէ որոնք միշտ պղտորին մէջ կը տեսնեն իրենց չափ եւ բնական վիճակ է իրենց համար: Դիտենք նաեւ թէ զրպարտութիւններ ալ պիտի լլան, սակայն անօգուտ է այլեւս եւ ասոնց արժէքը շատնց հասկցուած: Դամասկոսի մէջ այդ միութիւնը կազմող մեծագոյն հատուածին հետ մենք չփաման մէջ գտնուեցանք եւ ստուգեցինք որ բոլորն ալ անբասիր եւ մաքուր անցեալի տէր մարդիկ են, եւ զարմեալ մենք «Եսաղուպեան» կողմէ անկեղծօրէն գնահատելով գործը յարատեւութիւն եւ յաջողութիւն կը մտածենք եւ միաժամանակ ուրախութիւնն ուր Դամասկոսիցիք եղան առաջինը եւ օրինակը տուողը ազգային իրատես քաղաքականութեան: Այս չափը արձանագրելէ յետոյ կանցնինք նոյնքոյն:

ԲՐՈՓ. Ս. ԹՈՒՄԱՆՆ

Ազգ. Համաբախտութիւնը Յարգ. ճոյեբանք բոքէտոն եւ Կ. Պօլիս Դոպէր Գօլէնի փիլիսոփայութեան դասախօս Ար. Տէր Յակոբեանի տեսալէսով:

Կը շնորհաւորեմ Ձեր խմբագրութիւնը «Լիբանան»-ի եւ յարատեւ յաջողութիւն կը մտածեմ:

Կը շնորհաւորեմ նմանապէս Ձեզ նաեւ Ձեր առաջադրած նպատակին համար, որ է մեր գաղութահայութեան, համաբախտ գործակցութիւնը: Որը այսպիսի պարագայի մէջ անհրաժեշտ է իւր միջոց հանրային բարօրութեան բաց ալ աւելի անհրաժեշտ մերայնոց ներկայ ցիրուցան ու կազմալուծեալ վիճակին մէջ:

Ազգայնական անտեղի ու անիմաստ պայքարները պիտի ծառայեն միայն թշուառութիւնը օստակացնելու եւ չինարար ուժերը չլատելու: որքան տուած ենք արդէն այդ պայքարներէն: Երանի թէ սորվէինք անձնական ճգնիմ նկատումները եւ գոտութիւնները ի բաց թողնել եւ հանրային տեսակէտով նկատել խնդիրները եւ ըստ այնմ գործել: Դիտելն չէ այս փափաքելի վիճակը գոյացնել մեր մէջ արմատացած բարքերուն եւ բնազդներուն պատճառաւ: քայլ դիւրին կամ դժուար այդ ուղղութեամբ պէտք է աշխատինք ամէնքս ալ եւ կը մտածեմ որ «Լիբանան» ալ իր կարգին միջոց մը լլայ այդ ուղղութիւնը քաջալերելու: Յաւանքով ընդարձակ պիտի արտայայտուիմ Ձեր հրաւերին վրայ այս ուղղութեամբ, այս օր ժամանակ չկայ:

ԲՐՈՓ. ԱՐ. ՏԵՐ ՅԱԿՈԲԵԱՆ 9 Յունիս 930 Կ. Պօլիս:

Ձաքներ ալ միջեւ իսկ գիւղերու մէջ ունինք նախակրթարաններ, սակայն գորազաբար կրկնենք, արդիւնքը համեմատական չէ թափուած ջանքերուն եւ ցոյց տրուած նախանձանքներուն: պատճառ, որովհետեւ մեր նախակրթարանները օժտուած չեն, նախակրթարանական ծրագրով, մեր կրթական մշակները, ոչ ընդհանուր ամսամբ, զրկուած են իրենց բարձր կոչումի համապատասխան ձեռնհասութենէն, մեր ազգային մարմինները բացառութիւնները յարգելով, չունին իրենց վարած գործին գիտակցութիւնը:

Հետեւաբար եթէ կուզենք որ մեր նախակրթարանները հասնին բազմաշրջան աստիճանին, յանրաժեշտ է զանոնք յանձնել ձեռնհաս, կարող եւ փորձառու մշակներու: Ուսումնական խորհուրդը պարտաւոր է իր պարտաւորած նախակրթարանական ծրագիրը հաստատել եթէ ոչ ուսուցչանոց մը գոնէ ամառնային գասնժամք մը արդիական մէթոդներով ուժաւորելու համար մեր կրթական մշակները եւ միաժամանակ յիշտ փրկել զանոնք նիւթական մը:

Քրտական Ոյժեր Թրք. Խողի Մէջ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊՈԼԻՍ. — Թուրք օգնականը կը շարունակեն ուժակոծել ըմբոստըրդերու բանակատեղիները: Նոր հոսախումբեր անցած են սահմանադրութիւն:

ՊՈԼԻՍ. — Թրքական կառավարութիւնը իր Թէհրանի գեսպանին միջոցաւ պարսիկ կառավարութեան ուղարկութիւնը հրաւիրած է զինեալ քուրդ հրոսախումբերու սահմանադրուլ անցնելու պատասխանատուութեան վրայ:

ՊՈԼԻՍ. — Թրքական ոյժեր ուժակոծու ի օգնականերով, լայն ճակատի մը վրայ գործողութիւններ կը կատարեն պարսկական սահմանագրութիւն վրայ խուժող քրդական ըմբոստներու դէմ, որոնք կատարեալ ձիավարներ են եւ քաջ նշանառու, անոնք անաւոր հակառակորդներ են եւ կը հաւաստեն թէ երեք թրքական օգնականը ձգած են:

ԱՆԳԱՐԱ. — Աղբը տաղի կացութիւնը հետզհետէ կը որոշուի, երէկուրնէ ի վեր (6 Յունիս) սաստիկ ընդհարումներ սկսած լլայով յառաջ խաղացումը կը կատարուի արագօրէն միջանի օրէն վերջնական արդիւնք ձեռք կը բերուի:

Աղբը տաղի ըմբոստներուն Պարսկաստանի մէջ զինուելով ամէն օգնութիւն վախելը պաշտօնապէս հաստատուած է:

Պարսիկ կառավարութեան ըմբոստները հետապնդելով մեր սահմաններու բռնաբարման արգելք չը կարենալ լլայով պիտի վտանգէ իմ արժանապատեւութիւնը եւ զրացիական վատահոլութիւնն ալ բոլորովին պիտի ջնջէ: Կառավարութիւնը պէտք եղած գիտումը կատարած է Պարսիկ կառավարութեան:

Անգարայի պարսիկ գործակաւար Մէհմետ Սախախանէ հեռագրով տեղեկութիւն ուղարկած ու առնուած էսա պատասխանը:

Մէհմետ Սախախանի պատասխանը այս խնդրի մասին կառավարութեանն ցարկ ուն տեղեկութիւն չեմ ստացած: Դիտցածներս թերթերու պարունակութիւններէն կը բաղկանան: Այս բանի համար Թէհրանի մեր արտաքին գործակալին եւ թրք. հիւպատոս Մէհմետ Եֆէնդէ պէյի միջեւ խորհրդակցութիւն կատարուեալ վրայ է:

Պարսիկ կառավարութիւնը եւ թրքական գեսպանը կացութիւնը քննելու վրայ են: Մենք թրքական ներքին անդորութիւնը վրդովելու ընդթ ունեցող այս անակ շարժումները ոչ միայն չենք պաշտպաներ ալ կը զտապարտենք:

Թէհրանի մէջ ըմբոստներու պարսկական հոգէ, գալու տեղեկութիւններու վերջը կարելի պիտի լլայ վճիտ արձակել: Սա միայն ըսեմ թէ պարսկաստանի մէջ թուրքի հակառակ ունէ շարժումի տեղի տրուելու բացարձակապէս հաւանական չեմ կրնար նկատել:

Թէհրանի «Ճիւղհուրի» թերթի Անգարայի եւ Անատոլիոյ թղթակցներու տուած տեղեկութեանց համաձայն Աղբը տաղի մէջ խտուի կը շարունակուի սպասամբներու հետապնդումը: Որոնք շատ գէշ վիճակի մէջ են եւ տուած են մեծ կորուստներ: սպանեալներու մէջ զըտնուած են մի քանի ցեղապետներու:

Թէհրանի «Ճիւղհուրի» թերթի Անգարայի եւ Անատոլիոյ թղթակցներու տուած տեղեկութեանց համաձայն Աղբը տաղի մէջ խտուի կը շարունակուի սպասամբներու հետապնդումը: Որոնք շատ գէշ վիճակի մէջ են եւ տուած են մեծ կորուստներ: սպանեալներու մէջ զըտնուած են մի քանի ցեղապետներու:

Թէհրանի «Ճիւղհուրի» թերթի Անգարայի եւ Անատոլիոյ թղթակցներու տուած տեղեկութեանց համաձայն Աղբը տաղի մէջ խտուի կը շարունակուի սպասամբներու հետապնդումը: Որոնք շատ գէշ վիճակի մէջ են եւ տուած են մեծ կորուստներ: սպանեալներու մէջ զըտնուած են մի քանի ցեղապետներու:

Նուպարեան Զօնու Ա. ՑԱՆԿ

Հ. Բ. Ը. Միութեան Պէյրութի մասնաժողովը Ազգ. Մեծ Բարեպար Պօղոս Փաշա Նուպարի մահուան առթիւ ստացած է փոխան ծաղկեպսակի եւ հեռագրի հետեւեալ գումարները:

Ս. Դ.

Բ. Աղատ. Կուս. Պէյրութի Մասնաճիւղ 2000

Հ. Բ. Ը. Մ. ի ՆՈՒՊԱՐԵԱՆ

Շրջ. Սանուց Միութ. 500

Պօլսոյ եւ Շրջ. Հայր. Միութ. 2000

Հ. Բ. Դ. Պէյրութի Կօմիտէ 1000

Հ. Բ. Ը. Մ. ի Նահրի Մ. ճիւղ 500

Նահրի Ս. Լուսաւորելի եկեղ.

Թաղ. Խորհուրդ 300

Տօքթ. Բ. Թօփճեան 500

Համաբաժնում Ղաղարոսեան 500

Արամ Ծաղկարճեան 300

Հմայեակ Դրանեան 200

Տօքթ. Մ. Գէլիշեան 200

Մկրտիչ Կապրաշ 100

Պաղտատար Տարաղճեան 100

Լեւոն Դասապեան 100

Կարապետ Բացախեան 100

Նշան Տէր Պետրոսեան 100

Խրուանդ Վիշապեան 50

Տիւ. Կատար Յարութիւնեան 50

» Հրանուշ Էմմալեան 50

» Շէքէրճեան 50

» Հայկանուշ Մաթէոսեան 25

Զանազաններէ 90

Դուժար 88,15

[Կարունակելի]

զիակաները:

Լեւոնը ապաստանող հրոսակներ պարսկական հող մտնելու առնել նշանակ եղած են թրքական օգնականներու ուժակոծման:

Պարսկաստանէն օգնութեան համար են Հայրապետը եւ Ալիմանուլ ցեղերը: Թրքական ճակատի մօտ Այսպէս լեւոնը վրայ ալ համախմբումներ կան պարսկական սահմանագրայժեր կարգիւն անոնց ամառնոց գաղթը որպէսզի կարենան օգնել իրենց ցեղակիցներուն: Այս ցեղերը պարսկական հող կը փոխադրեն ըմբոստներու ընտանեկան պարագագաները: Պարսիկ կառավարութեան ըմբոստներու սպառազինութեան ու քաջալերութեան մէջ կատարած գերը հաստատուած է:

Պ. Ո. ՄԱՐՏԻԿԵԱՆ ՊԵՐՈՒԹԻ ՄԷՋ

Ներկայիս Պէյրութ կը գտնուի, Թուրքիոյ երգեցիկ հանրաժանութ Բօթի հեռագրական նախարար Ոսկան էֆ. Մարտիկ ան, թերթիս մամուլը գրուած պահուն, պատահունքով մեր հնարագրապետը հանգիւղած է իրեն: Ժամանակ չէ եղած երկար տեսակցելու եւ կուտունք հարկաւ լուսաբանութիւնը յաջորդել:

ՔԱՆՆԱԿԱՆԵՐ

Կուսակցութիւններ տեսալ եւ որոնք անուամբ են միայն կուսակցութիւն:

Այդամ ըսուածները գաղափարի վրայ մի բառ մանրամասնաւ հաւատք չունին եւ ծրագրային գիտութիւն:

Ամէն ոք մէկ կողմ կը զարնէ, կը ինչ իր տիւտիւր ոչ խօսք կը հասկնան եւ ոչ հաշտութիւն:

Բացառութիւններն յարգելով, շահու ինչիդ է տիրածը շատերու: Մնացած ին նպատակնալ անձնականութիւն:

Նկուր գուն ալ կազմէ կուսակցութիւն մը Կէլէզ Միամիտներ շատ կան:

Հաւատացի ինծի, մի քանի պարագանք ժողուէ գլուխը զարկ թմբուկը. եւ գրամ ալ կուտան:

Մաքուրին զարն անցաւ, կեցծէ, ստէ, խարդախէ գուն ալ ո՞վ կըտայ յարգ զիտութեան:

ՆԵՏԱԲՐՔՐԱԿԱՆ ՆՈՔԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕՐԱՆԱԻ ՄԸ

Լոնտոնի մէջ շինուած է գինւարան հսկայ օգտնաւ մը և 20,000 հետաքրքիրներու առջև կատարուած են փորձերը: Այս հսկայ օգտնաւը վեր կը սլանայ ուղղահայեաց կերպով, 5 վայրկեանէն 3,200 մէթր 8 վայրկ. 5,000 մէթր, 12 վայրկեանէն 7,000 մէթր, դէպի ալ, ձախ, առջև, ետև վեր և վար կարենալով արձակել միջխալէօղի գնդակներու տարափ մը: Այս բոլոր գործերը շարժման մէջ կը դրուին ելեքտրական կոճակի մը վրայ գնելով մատին ծալքը: Նաւագները կը կրեն դիմակներ որոնք մասնաւոր խողովակով մը կ'ստանան լիճուածին:

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՄԷՋ ՄԱՐԻԿԱՅԻՆ ՇԱՐՓՈՒՄ

Ներկայ շտաբուայ յունվարի վիճակագրութեանց համեմատ Մ. Նահանգներ ունին 121,051,856 բնակիչ: Ամէն 13 երկվայրկեանի մէջ ծնունդ մը կ'ըլլայ իսկ 23 երկվայրկեանի մէջ մահ մը: Ամէն մէկուկէս վայրկեանի մէջ գաղթական մը դուրս կ'ելնէ, ծնունդներու և մահերու տարբերութիւնն է 900,000:

ԳՐԹԱՅԻ ՕՐԵՆՔԸ

Մ. Նահանգներու մէջ գիտաւորութիւն կայ հար. Ամերիկայէն և Մեքսիկայէն եկողներն ալ ենթարկել զօթայի օրէնքին:

ՍԵԻԱՍՈՐՔՆԵՐ Կ'ԻՍԼԱՄԱՆԱՆ

Կ. Պոլսոյ մէջ իսլամացած և Ալի Մէհմետ պէյ կոչուող Ամերիկացի սեւամորթ ձէյմա Լեմօքս յայտարարած է թէ իսլամական կրօնը սեւի ու ճերմակի խտրը չունենալուն պատճառաւ Ամերիկացիները պէտք է իսլամական կրօնը ընդունին ու թուրքիա գաղթեն: Ըստ ալի Մէհմետ պէյի 83 սեւամորթ ընտանիքներ Տիքթոյի թէն գաղթելու հրաման խնդրած են:

ԲԱՐԻՋԷՆ ՊԻՏԻ ՌԵԲԱԿՈՍՈՒԻ

ՆԻԻ ԵՕՐՔ

Փրանսացի Բէլթէրի անուն ճարտարագէտ մը դատած է նոր պայթուցիկ մը սրով կարելի պիտի ըլլայ Նիւ-Եօքքը ուժեղացնել Բարիճէն: Բէլթէրի այս գիտը ընելու համար ուսումնասիրած է գերմաններու հաւմայտարհային պատերազմի մէջ գործածած Սեմ Պէրթանթանթը սրով ունեւոր մէկ երկվայրկեանի մէջ 1-400 մէթր արագութիւն ունէր: Նոր ունեւոր պիտի ունենայ 11180 մէթր արագութիւն, այնպէս որ 23 վայրկեանի և 48 երկվայրկեանի մէջ պիտի հասնի Նիւ-Եօքք:

Կը տեսնես կոր չէ հասարակական խաւերը, այս չէ բռնուած ճամբան:

Եթէ ոչ անօթի կը մնաս, խիղճ, սիրտ զնահատող չ'կայ, նոյն իսկ անուղի կուտան անբան:

Վարժարաններու տեսուչներ կան յիմար, անուրը ա.բ.գ. կամ գ.ս.գ. որոնք իրենց ընկեր կը փնտռեն:

Մամուլ Առաջնորդարան կը շահագործեն հացի մի խնդիր և պատիւներ կը մերձեն:

Չեն ամչնար ասոնք տուր քանի քսրայ ձեռքերնին. ամբ. շխտած ըսածնին ետ կ'առնեն:

Աստուած քեզի հետեւ պահէ, չէլէզ անակարագիր անբարոյ և ինչ կամ գ.ս.գ. նոյն իսկ բառէն:

«Կէլէճ»

ՏԵՂԱԿ. ԼՈՒՐԵՐ

ՆՈՒՊԱՐԵԱՆ ՖՈՆՏ

Պէյրուի Չ. Բ. Ը. Միութեան մասնաժողովի կողմէ կը շարունակուի Նուպարեան ֆօնտը: Առաջին ցանկը յայտ կը ներշնչէ թէ Լիբանահայեր գործնականագէտ պիտի ցոյց տան իրենց յարգանքը հանգէպ մեծ բարերարին:

ԴԱՐՁԵԱԼ ԲԵՋԻՏԻՍԻԳՆԻՊ

Անգլո-Նահրի քէմփը, որ կեդրոնի քէմփերէն տեղափոխուած աղջակներն ու 400 ընտանիքի պատկանելի թիւի մը հասած է, 6 ամիս պայմանաժամ ստացած էր կեդրոնական պոզուսիոն, 50 մէթր դէպի ներս պէթոնի բնակարաններու փոխելու համար տախտակեայ պարագները: Թաղեցիները Յունիս ամսոյ մէջ հոգեւոր պետներու գիմած էին եւ սակայն ցարէ պատասխան մը առած չ'ըլլալով, անցեալ եօթնեակին մէջ կրկին գումարում մը ունեցած և որոշած են Դեմոստիոնի խնդիրը: Հոգ. պետեր յայտնած են իրենց գիմումը պատկան իշխանութեան ու ցարէ պատասխան առած չ'ըլլալին: Հոգ. պետեր եթէ չ'յաջողին կառավարական որոշումը բաւարարելու, հետեւեալքը պիտի լինի արգահատելի սրովհետեւ մօտ ատենէն Ատանայի քէմփի մէկ մասն ալ հարկադրուած է տեղափոխուի: Կառավարութիւնը յօդուտ հայ ազգայիններու առում է այս որոշումը սակայն նիւթական միջոցներ կը պակսին:

ՊՈՒՐԴԻ ՄՕՏ ԽԱՆ ՆԱԳԳԱՇԸ

Որ հինգ օրէ ի վեր փակուած ու ոստիկանական հսկողութեան յանձնուած էր Կուլթսի Ֆալէի կահածի ի հիւանդութեան պատճառաւ, վերաբացուած է ինչոր վտարգաւոր հիւանդութեան անհետացման նշան կը նկատուի:

ԴԱՄԱՍԿՈՍ-ՀԱԼԷՊ

ԵՐԿԱՅԻՆԱԳԻՄ

Դամասկոս Հալէպ երկաթուղագիծի ընկերութեան բաժնետէրերը իրենց վերջին համագումարին մէջ կատարած են անցեալ տարւայ վիճակագրութիւնը ու հաստատած թէ 3,754,307 ֆրանք գումար հասոյթ եղած է:

ՕՍՄ. ՀԱՆՐ. ՊԱՐՏՈՒՅ

ԲԱՇՆԵՏԵՐՆԵՐԸ

Օսմ. հանրային պարտուց ֆրանսացի բաժնետէրերը հաւաքոյթ մունեցած են իրենց շահերու պաշտպանութեան համար անհրաժեշտ եղած միջոցներու շուրջ տուած կարեւոր որոշումներ:

ԼԻԲԱՆԱՆԻ ԱՐՏԱՊՈՒՄՆԵՐԸ

Ի ՄԱՐՍԵՅԼ

Հակառակ ցած գիններու մետաքսի խողակի խնդրանքը տկար է, Բուրգի գինն ալ, հակառակ առատ ըլլալուն, կը մնայ ցած ու խնդրանք նուազ:

Յորենի նոր բերքը խոտուածից է նոյնպէս եգիպտացորենը. նաեւ լուբիան:

Ոսպի գիններ կ'ընթան, նոյնպէս իջած է գինը ձիթալի որ այնքան առատ է:

Անուշ նուշի ինչպէս նաեւ լիզի նուշի գինները կայուն են. քիմիոնի գինը անկումներ ունեցած է:

ԿԸ ԽՆԴՐՈՒԻ

Մեր յարգելի պատեօնակից «Ազդակ» քերթի Տէր եւ Տնօրէնի Հայր Պր. Ռուբէն Պալեանէ փութացնել 1929 թուոյ Բ. վեցամսեայ բաժանորդագիրը 165 Սուրբ. Ինչպէս նաեւ 50 դր. իր դրսեր Ուսուցչական պատեօնի յայտարարութեան մնացած:

ՄԻԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Հակասեմական Բրութական

Բուժանիոյ Մէջ

Կատարուած քննութիւններէ հաստատուած է թէ Պուքրէշի մէկ թաղին հրկիզման և 10 մեռելներու պատճառ է հակասեմական բրութականը:

Յուլիս 14ի Հանդէսներ

Ուշուած է մեծ շուքով կատարել ֆրանսական յեղափոխութեան տարեգարծի հանդիսադրութիւնները ֆրանսայի և գաղթականներու մէջ:

գերմանիա եւ Պրիանի

Յիշատակագիրը

Գերման Արտ. գործավար պրն. Գորթիուս պրն. Պրիանի յիշատակագիր պատասխանը յանձնած է Ռայխսթայի արտաքին գործերու յանձնաժողովին որ իր կարգին պիտի քննէ ու ենթարկէ խորհրդարանի վաւերացման:

Համալրողական Դաւանկցութիւն

Համալրողական Դաւանկցութեան հանար ֆրանսայի արտաքին գործոց նախարար պրն. Պրիանի ուղղած յիշատակագիրը միւս ընդունելութիւն գրած է չհազարգուող անընթեանց կողմէ:

Հնդկաստանի Խռովութիւնները

Հնդկաստանի խռովութիւնները կը շարունակուին. Բրիտանական կառավարութիւնը կը կատարէ խիստ հետապնդում:

Չինական Կռիւներ

Արիւնոտ բաղիւններ կը շարունակուին. Նանքինի կառավարական ուժերու յաջողութիւնը հաւանական կը լինի: Օտարականներու գէմ ճնշումներ չկան:

Սարի Բանակցութեանց Խզումը

Սարի ֆրանք-գերման բանակցութիւնները խզուած են գերմաններու համագործակցական ոգիի գէմ կատարած առաջարկներուն հետեւանքով: Զանքեր կ'ըլլան բանակցութեանց վերսկսումին առթիւ բարեկամական լուծումի մը յանգելու համար:

Բրդական Ըմբոստութիւն

Չիլիի և Արարատի շրջաններուն մէջ տեղի կուենան արիւնոտ ընդհարումներ թրքական կամոնաւոր զօրքերու և ըմբոստներու միջև: Վերջինս ներք իրենց ընդդիմութիւնը կը զգուցեն օգուտի հաւանող նոր ուժերով:

4.825.021 Ֆրանք. Եկամուտ

Կատարուած վիճակագրութեան համեմատ Պէյրուի Նաւահանգիստի քարափի և մաքսատան 1929 տարուայ հասոյթը եղած է 4 միլ. 825 հազար 021 ֆրանք:

8 Միլիոն Անգլ. Ոսկիի փոխառութիւն

Գերման Արհեստակցական խմբակ մը առաջարկած է Թրքական կառավարութեան 8 միլիոն Անգլ. Ոսկիի փոխառութիւն. պայմանաւ որ Թրքական երկաթուղիներու նիւթերը ըլլան գերմանական:



Դ Պ Ր Ո Ց

ՁԵԻԻ ԵԻ ԿԱՐԻ

ԱՍԵՂՆԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ

ԵԻ ՆՈՐՈԳՈՒԹԵՄՆ,

Սիմկէրի Կարի Մեքենայի Ընկերութիւն

Պաշիւ ունիմ ծանուցանելու մեր յարգելի յանախորդներուն քէ՝

ԲԱՑՈՒԱԾ Է

30 ՅՈՒՆԻՍ 1930 ԵԻ

Տեղի Պիտի Ունեման Դասաւոսութիւններ

Ուսուցման, Ձեւելու, Կաւելու, Ասեղնա խոյսութեան ԵԻ Նորոգութեան Սիմկէրի Կարի Մեքենաներով

ՀԱՍՑԷ՝ Բիւ Կուրօ Մար Միայիի գիմաց Պէյր Ջապպալ ԴԱՍԱՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԴԻԻՐԱՄԱՍՏԵԼԻ ԵՆ ԱՄԷՆ ԱՆՁԻ

ԴԱՍԵՐԸ ՁՐԻ ԵՆ

Այն անձերը որոնք կը փափաքեն հետեւի դասերուն պիտի ըսեն:

ՍԻՆԿԷՐ ԿԱՐԻ ՄԵՔԵՆԱՅԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՌԻՇԱԳՐՈՒԹԻՒՆ

Գիտական դասընթացը մալ բաց-
ուած է երիտասարդները համար,
իմաստասիրական գասեր կաւանդու-
ին մեր եւրոպացիներին կողմէ եւ
փափաքողները կրնան դիմել «Լիբա-
րա» Տպարանը:

Յետեւեւան ժամ առաւօտեան
ժամը 8 էն մինչեւ կէս օրէ. վերջ
ժամը 2:

ՅՈՅԺ ԿԱՐԵՒՈՐ

Մեր հին և նոր յարգելի բաժա-
նորդներէն կը խնդրուի փութացը-
նել իրենց յետնեւ և նոր հաշիւներ
1921 Վճիգ փրկելու համար կարգ մը
զօռաւորութիւններէ սրունց կարգին
են թղթատարական անհարկի ծախ-
քեր և Գանձումի համար բազմա-
ծախս ուղեւորութիւններ:

ՓՆՏՈՒԵՑԼԻ ԵՒ ԳՈՐԾԱԾԵՑԼԻ

հայկական լաւագոյն եւ առողջապահական

ՄԱՆՈՒԿԵԱՆ ՄԻԿԱՐԷԹՆԵՐԸ

CIGARETTES MANOUKIAN

ԶԱՆԳԱԿ, ՀԱՅ ԶԱՅՆ, ԱՄԱՆՈՅ, ԼԻԻՔՍ

Հանրաժանօր անուններով

Որոնք իրենց առաւելութիւններով կը գերազանցեն տեղական բոլոր սի-
կարէթները, ՄԱՆՈՒԿԵԱՆ, սիկարէթները կը ծախուին Բնկերութեան ֆոնդ
էլ Շըպէթի գործարանի մէջ և բոլոր ծխափաճառներու քով: Լիբանանի և
Սուրիոյ բոլոր կողմերէն կատարուած մեծաքանակ և փոքրաքանակ յանձ-
նորարութեանց համար ճշգրտակ և խղճամբով գոհացում: Օրական 40000
սպառում:

ԴԻՄԵՑԼԻ ԴԻՄԵՑԼԻ ԴԻՄԵՑԼԻ

ՄԱՆՈՒԿԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Փօսթարկ 718 Գէյրուի (Լիբանան)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԻԲԵՍ ԿՕՃԱՆԿԱՐԱՏՈՒՆ

ԹՈՐՈՍ ՀՍՃԻ ԳԵՈՐԳԵԱՆ



Կանանց, արանց և փոքրիկներու համար
յոյժ նորածն և ամէն տեսակ կօշիկներ ապա-
ւորանք կամ պատրաստ:

ՅՈՅԺ Զ ՓԱՒՈՐ ԳԻՆԵՐ ԵՒ ՃՏԱՊԱՆԶ ԳՈՐԾ:
Հասցէ Վասի Ապու ձեմրի Պէյրու:

ՏՊԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆ

Կը պատրաստուին՝

ԴԳՐՈՑԱԿԱՆ ՊԻՏՈՅՆԵՐ.— Տեղական, Գիւրջ (գլորացական, գրա-
կան ու վիպական):

ՀԱՅԵՐԷՆ ՖՐԱՆՍԵՐԷՆ ԵՒ ԱՐԱՐԵՐԷՆ.— Լեզուներով, կտանա-
նէ Տպագրական ԿԱՍ՝ Հրատարակչական,
Ամէն տեսակ գործեր երեք լեզուներով,
նաեւ առեւտրական ամէն տեսակ գործեր
ինչպէս նաեւ Հարսանեկան Հրաւիրագիրներ

Տուփի Գործարան

Կը պատրաստուին՝

Շաքարի, Լօգումի, Շօքուլի, Կօշիկի,
Դեղարանի, Շաքիկի ԱՄԷՆ Տեսակ
տուփեր քառեր և պատկերներ:

Յոյժ դիւրամասցելի պայմաններ ԵՒ

Խնամեալ ու նշանաւոր գործ:

Մ. ՍԵՐՈԲԵԱՆ (Իր մէկ երկէն արտասպում) 6

ԱԶԳ. ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ԱԶԳ. ՆԿԱՐԱԳԻՐ

կուտայ. խզում ազգային, ընտանե-
կան և ընկերական աւանդութիւննե-
րուն հետ, խզում պարկեշտութեան
հետ խզում ազատութեան և ար-
դարութեան զաղաքտին հետ: Տե-
սակ մը բարոյական անխիանութիւն,
տեսակ մը հոգեկան պոլշիկով վարա-
կած է հոգիները, սրտերը թթուած
են ու տխուհուր և ապօրէն վայել-
քի անորոշակի է օր զօրուած է ա-
մէն կողմ: Լուսադոյնին հանգէպ
յարգանքը մեծած է, և կրթութեան
ապրանքան յորդման մէջ կործա-
ղուրկ և բարոյազուրկ հոգիներ են,
որ թուեալու հոսանքին մղուած,
կ'ըստու տրացիոն գանդ ուժերը, և
յուսահատութիւն կը պատճառեն բա-
րոյազան և նշանական տեսակետով

չինարար տշխատանքի ըծելի ուղող
հոգիներուն: Եւ. գաստիարակութեան
զուրկ աշակերտը գատապալտուած
է այսօր ապրիլ ահարկու իրականու-
թիւններու թատր եղող սա մեր աշ-
խարհին և մալ գլային ընկերութեան
մէջ:

Բայցայոգ ուժերու այս յորձան-
քին մէջ, մենք «Դեղագիտական
Իտ'ալ»ի հեղինակին հետ կընդունինք
թէ գաստիարակութիւնը պէտք է
աշխատի աշակերտին մէջ 1. կազ-
մի կատարեալ մարդ մը, ընկերա-
կան գործին խելացի: հմուտ և ժը-
րաշան գործակից մը, ողջամիտ և
բարոյական էակ մը: 2. անոր մէջ
յարգարիչ և բնի գեղեցիկն սերը,
բարեկէն կորովը, համը մը: Իտեալ

ՊԱՊԻԿԵԱՆ ՀԱՅ. ՕՃԱՌԻ ԳՈՐԾԱՐԱՆ

SAVONNERIE BABIKIAN

Անքը լոյս մաքրարէրներու. Պէյրուի մէջ բացուած է Լիբանանի անգրանիկ
հայկական օճառի գործարանը եւրոպական մեքենաներով և ձէթով:

ՌԻԻ ՆԱՅՐ ԴԱՍԱՍԿՈՍԻ ՇՈԳԵԿԱՐԻԻ ԿԱՄՈՒՐՁԻՆ ԿԻՑ

ՊԱՊԻԿԵԱՆ ՕՃԱՌԸ ԱՆՄՑԵԼԻՕՐԷՆ ՈՒՆԻ

= Մաքրողական ոյժ, — Անխառն ու պատրաստուած Մարսիլիական
ձէթով, — Յոյժ դիւրամատչելի գիներ, — Տեղական և եւրոպա-
կան բոլոր օճառներէն լաւ, — Արագ փրփրալու և ուշ սպա-
ռելու յատկութիւն, — Հազուտեղէնները լաւ մաքրելու
և չմաշլշնելու ոյժ, — Ձեռքերը փափուկ պահելու
հրա զոյր, — Տաք և պաղ ջուրով գործածելու
դիւրութիւն

240 կրամից մեծ կտորը 6 Ս. Դ.

120 » փոքր » 3. » »

Տեղական օճառի օխան 30 » »

Պապիկեան Գործարանի մէջ եւ հայ նպարաւաճառներու մօտ
Մաքրարէն: — խնայաւորներ, օգտուեցէ՛ք


ՏՕՔԹ. ՄՈՎՍԷՍ ՊԱՊԻԿԵԱՆ

ՀԵՆՏԵՐ ՓՈՂՈՑ — ՀԵԼԷՊ

Հալէպի եւ Բօֆորայի Մօրթոյ մէջ ծանօթ իրրեւ բժիշկ եւ վի-
րաբոյժ: ԲՆԳՏԱՆԵՐ պատերազմի միջպին թրք. բանակին մէջ ծա-
այած ու մէտաշխրեալ վարձատրուած: Կը դարձաւ բժիշկական ա-
մենաարդիւնատէր սիւսցնով տրէշ արգիւր - Բաղաւթիւններու վեր-
էր խղճամբով եւ արագ դարձաւ ուր:

ՅԱԿՈԲԵԱՆ ԵՂԲԱՐԲ

ՍՈ ԶՆԱԿԱՐԳ ՀԱՅ ԶՈՒԼԱԳՈՐԾ



Կը ձուլեն աւել տալ կազմարներ գործիչ-
ներ. կը ծախեն եւ կընորոգեն ԲՐԻՄԻՆԻ
ամէն տեսակ գործիքներ

ԶԵՓ ԻՈՐ ԳԻՆ ԵՒ

ԻՆ ՄԵԼԻ ԲԵԼԵՏԵՐԻ

ՀԱՍՑԷ ԹԱՐԻԳԷԼ ՇՄՍ ԹԻԻ 96 ՊԵՐՈՒԹ

ՕԹԷԼ ՄԵՐՍԻՆ

Պէյրուի հիօղ երկաթուղիի կայարանին կից:

Մաքուր անկողին, անթերի սպասարկութիւն եւ ընտանեկան
խնամք, գին խիստ չափաւոր
ձամբորդներ իշէլ օրէլ Մէրսինը — գո՛ն պիտի մնա՛

ՕԹԷԼ ԱՏԱՆԱ

ՓՈՇ ՓՈՂՈՑ ՄԵՍԱԺԳԻՐ ՄԱՐԻԹԻՅԻ ԲԴԻ

Պէյրուի լաւագոյն պանդոկներէն մէկը. ժողոված տաք և պաղ ջուրի
բաղնիքով, առատ երկքորտկան լոյսով, երկրորդ և երրորդ յարկերու վրա,
խիստ օգտուել տեսնակներով, չտիպողանց մաքուր անկողիններով և յարգե-
լի յաճախորդներու հոգեխնայող տպանով ու հիւանդի սպասարկութիւններով
ձամբորդներու համար գիւրութիւններ:

Տէր և Ծնօրէն ԺԱԳ ԱՐՇԱԹԻ

մը, 3. պէտք է չարքաշ, ճիւղն և
գեղեցիկ շինել գինքը, սրպէսպի
միտքը կորովի ըլլայ և կամքը զօրա-
ւոր: 4. պէտք է անոր մէջ կազմել
պարկեշտ քաղաքացին, և անոր սուր-
վեցնել ընկերական կարգապահու-
թեան անհրաժեշտութիւնը և յար-
գանքը բոլոր ազատութիւններու 5.
պէտք է անոր ձեռքին մէջ գնել տը-
ղարութեան գործիք մը, տպահոգե-
լու համար կեանքի անհրաժեշտ տղ-
բիւրները և ընկերութեան համար
ըլլալու օգտակար գործակից մը:

Հակառակ ազգային վարժարան-
ները նախընտրելու մեր անասման
բաղձանքին, ես պիտի չը մեղադրէի
մէկը, որ յուսահատ մեր ազգային
վարժարաններու անուանական դո-
յութեան: Եւ, մեթոտի ուսուցիչի և
գաստիարակի պակասէն, ինքզին-
քը հարկագրուած կըզգայ, ակամայ
երթալ ալլուր փնտռելու իր զուկին
համար դպրոց մը, որ գոնէ մասամբ
կրնայ լրացնել իրմէ պահանջուած
կրթական և գաղտնաբանական աշխ-

հինգ պայմանները:
Եւ այս տեսակ գաստիարակու-
թիւն մը պիտի նախընտրէի ազգային
կ'ըսած տնէ, ոնանկայած, անգոյ-
ախտաւոր գաստիարակութեան մը:
Որովհետեւ անհրաժեշտ է նախ մար-
դը շինել, անստղծալ յատկութիւննե-
րով օժտուած, և մեղի համար գիւ-
րին պիտի ըլլայ յետոյ (հայացնել,
ազգայնացնել) այդ կատարեալ մար-
դը: Եւ ընդհանրապէս ամենապե-
տարին գործը պիտի ըլլար ընկերա-
կան և անհատական մոլութիւննե-
րով փարակուած հայ մը: մարդու
վերածելու Այս պատճառով անգամ
մալ կը կրկնենք Գ. Արծրունիի խօս-
քը, «Օրաշիւր հրատարակեցէ՛ք ոչ թէ
այն նպատակով որ ընթերցողները
հայասէր և ազգասէր չլինենք»: Եւ
այլ հայերէն մարդիկ չլինեցէ՛ք: Նոյն
խիկ ազգային գաստիարակութեան
գործին մէջ այս համոզումը պէտք է
ըլլայ մեր ազգային տնտեսական
հայրենասիրական դաւանանքը:
(Նար.)